SECRETARY OF WAR
1000 DEFENSE PENTAGON
WASHINGTON, DC 20301-1000

JAN - 9 2026

MEMORANDUM FOR SENIOR PENTAGON LEADERSHIP
COMMANDERS OF THE COMBATANT COMMANDS
DEFENSE AGENCY AND DOW FIELD ACTIVITY DIRECTORS

SUBJECT: Artificial Intelligence Strategy for the Department of War

Accelerating America's Military AI Dominance

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՐԱՐ
000 DEFENSE PENTAGON
WASHINGTON, DC 20301-1000

ՀՈՒՇԱԳԻՐ

ՊԵՆՏԱԳՈՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՆ ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Առարկա՝ արհեստական բանականության /ԱԲ/ ռազմավարություն Պատերազմի նախարարության /ՊՆ/ համար

Ամերիկայի ռազմական ԱԲ գերակայության խթանում

Նախագահ Թրամփը 14179 գործադիր հրամանագրում պարզաբանվում է, որ «Միացյալ Նահանգները պետք է աջակցեն և ամրապնդեն ամերիկյան ԱԲ գլոբալ գերակայությունը՝ մարդկանց բարգավաճմանը, տնտեսական մրցունակությանը և ազգային անվտանգությանը նպաստելու համար»: Ազգային անվտանգության ոլորտում ԱԲ աջակցած ռազմական գործողությունների վարումը և ԱԲ աջակցած կարողությունների զարգացումը նորովի կորոշվի ռազմական ոլորտի բնույթը հաջորդ տասնամյակի ընթացքում: Այս վերափոխումը մրցավազք է, որը պայմանավորված է Ամերիկայի մասնավոր տնտեսության հատվածի ԱԲ առևտրային նորարարություն-ների ներդրման տեմպերի արագացմամբ: ԱՄՆ-ի զինուժը պետք է ամրապնդի իր

գերազանցությունը մեր հակառակորդների նկատմամբ՝ ինտեգրելով այն տեխնոլոգիաները, որոնք մշակվել են Թրամփի առաջին նախագահության օրոք, որպեսզի մեր մարտիկներն դառնան ավելի մահացու և արդյունավետ: «Սույն նպատակով, America's AI Action Plan-ի համաձայն, ես ՊՆ-ին հանձնարարում եմ արագացնել Ամերիկայի ԱԲ գերակայությունը, «ԱԲ-ն դարձնելով առաջնահերթ» մարտական ուժ իր բոլոր բաղադրիչներով հանդերձ՝ ճակատից մինչև թիկունք»:

ՊՆ կհասնի այս նպատակին հետևյալ եղանակներով.

- ամբողջ դեպարտամենտում ԱԲ ամերիկյան առաջատար մոդելների փորձարարությամբ և «ԱԲ-առաջնահերթ» կիրառմամբ ժառանգված մոտեցումների վերաիմաստավորումով;
- ակտիվորեն բացահայտելով և վերացնելով ավելի խորը ինտեգրման ճանապարհին բյուրոկրատական խոչընդոտները, որոնք հնացած տեղեկատվական տեխնոլոգիաների և պատերազմի վարման եղանակների մնացորդներ են;
- կենտրոնացնելով մեր ներդրումները ԱԲ հաշվարկման, մոդելների նորարարության, ձեռներեցների աշխուժացման ոլորտում;
- Ամերիկայի հիմնական ասիմետրիկ առավելություններն առավելագույնս օգտագործելու համար կապիտալի շուկաների և վերջին երկու տասնամյակի ընթացքում ռազմական և հետախուզական գործողություններում ձեռքբերված ու մարտադաշտում փորձարկված գործառնական տվյալների օգտագործմամբ;
- Իրականացնելով «Տեմպեր սահմանող նախագծերի» (Pace-Setting Projects, PSP) շարքը, որոնք ցույց կտան կատարման արագացված տեմպերը, նպատակասլացությունը և ոգին, որոնք մեզ անհրաժեշտ են առաջատար մնալու համար:

PSP-ները նաև կդառնան շոշափելի, վերջնական արդյունքների վրա հիմնված գործիքներ՝ արագորեն ավարտելու ԱԲ հիմնական բաղադրիչների (ենթակառուցվածքներ, տվյալներ, մոդելներ, քաղաքականություն և տաղանդներ) ստեղծումը, որոնք անհրաժեշտ են ԱԲ ինտեգրումն արագացնելու համար ամբողջ ՊՆ-ում: Ստորև նկարագրված նախնական յոթ PSP-ները սահմանում են կատարման նոր չափանիշ՝ միանձնյա պատասխանատու ղեկավարներ, պարտադրող ժամկետներ, չափելի արդյունքներ և արագ կրկնություն, որտեղ ձախողումները արագացնում են ուսումն ու կատարելագործումը:

Արագացման մոտեցում

Սույն ռազմավարությունն իրականացնելու համար մեր կիրառած միջոցները կշարունակեն ներառել բոլոր զորատեսակների և բաղադրիչների ԱԲ-կենտրոնացված մեր ծրագրի զգալի ֆինանսավորումը և աշխատուժը: Մենք նաև կօգտագործենք Կոնգրեսի կողմից One Big Beautiful Bill տեսքով տրամադրված ֆինանսական միջոցները, ինչպես նաև համատեղ արագացման պահուստի (Joint Acceleration

Reserve) եղանակով ընդլայնված բյուջեի ճկունությունը՝ մոտ ապագայում ռազմական ԱԲ ինտեգրման տեմպերը արագացնելու համար: Եվ մենք կօգտագործենք Ամերիկայի դաշնակիցների և գործընկերների հասանելիությունը, հնարավորությունները, ներդրումները և գիտելիքները՝ մեր ընդհանուր նպատակներին հասնելու համար, որոնք ներկայացված են նախագահ Թրամփի ԱԲ գործողությունների ծրագրում (AI Action Plan)՝ «առաջնորդություն միջազգային ԱԲ դիվանագիտության և անվտանգության ոլորտում»:

Մենք կվերակենտրոնացնենք Թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության գլխավոր տնօրինության (Chief Digital and AI Office, CDAO) աշխատանքը և այդ ընդլայնված ռեսուրսները՝ հիմնական հիմքային գործիքները ներգրավելու համար: Դա ամբողջ գերատեսչությունում կարագացնի պատերազմում հաղթանակի հասնելու ջանքերը, սկսած 2026 ֆինանսական տարվա ստորև թվարկված յոթ PSP-ների փաթեթի ներդրումից: Այս PSP-ների միջոցով ռազմական ԱԲ-ի առավելությունների հիմնական հնարավորությունները կտարածվեն պատերազմի վարման, հետախուզության և նախաձեռնության բնագավառներում:

❖ **Պատերազմի վարման բնագավառ.**

1. <u>Պարսի[1] դարբնոց.</u> ԱԲ հնարավորությունների օժտմամբ կամ այդպիսի հնարավորություններ ունեցող հակառակորդի դեմ պատերազմի վարման նորարար ուղիների հաջորդական որոնումն, փորձարկման և ծավալման մրցակցային մեխանիզմ, որը Ամերիկայի էլիտար մարտական ստորաբաժանումները կհամատեղեն էլիտար տեխնոլոգիական նորարարների հետ:

2. <u>Գործակալական ցանց</u>. ԱԲ գործակալների մշակում և փորձարկում մարտերը կառավարելու և որոշումների կայացմանը աջակցելու համար՝ անընդհատ շղթայաձև գործընթացի եղանակով, սկսած ռազմարշավի պլանավորումից մինչև կոնկրետ հակառակորդի ոչնչացում:

3. <u>Էնդերի[2] ձուլարան</u>. ԱԲ-ն պետք է օժտած լինի սիմուլացման հնարավորությունների (ինչպես նաև սիմուլացված զարգացումների (sim-dev) և սիմուլացված գործողությունների (sim-ops) հետադարձ կապի համակարգերը) արագացրած զարգացումով, որպեսզի մենք գերազանցենք հակառակորդներին:

❖ **Հետախուզություն.**

4. <u>Բաց զինանոց</u>. արագացնել «տեխնիկական հետախուզությունից դեպի ունակություն» (TechINT-to-capability) միջոցների մշակման խողովակ՝ հետախուզական տվյալները ժամերի, այլ ոչ թե տարիների ընթացքում զենքի վերածելու համար:

---

[1] Պարս՝ swarm (Eng); рой (рус):

[2] Էնդեր՝ Օ. Քարդի (*Orson Scott Card*) վեպերի շարանի գլխավոր հերոս Էնդրյու Ուիգինի մականունն է: Առավել հայտնի է *Ender's Game* ֆիլմից՝ որպես թշնամի այլմոլորակայինների նկատմամբ որոշիչ հաղթանակի առաջնորդ: Ուսման և առաջին մարտերի շրջանի ամենամոտ ընկեր և շարանի հերոս՝ Պետրա Արքանյան:

5. Գրանտ[3] Ծրագիր. ստատիկ կեցվածքից և մտորումներից ահաբեկման վերափոխում՝ դինամիկ ճնշման եղանակով մեկնաբանելի արդյունքների հասնելու համար:

❖ **Նախաձեռնություն.**

6. GenAI.mil. էլեկտրոնային ցանցի միջոցով ԱԲ փորձի և վերափոխումների տրամադրում ամբողջ ՊՆ-ում՝ աշխարհում առաջատար ԱԲ ամերիկյան մոդելներն ուղղակիորեն հասցնելով երեք միլիոն քաղաքացիական և զինվորական մեր անձնակազմին՝ գաղտնիության բոլոր մակարդակներում:

7. Նախաձեռնող գործակալներ. ԱԲ գործակալների արագ և անվտանգ մշակման և տեղակայման սխեմայի կերտում՝ նախաձեռնող աշխատահոսքերը փոխակերպելու համար:

PSP-ներից յուրաքանչյուրը կղեկավարվի օրինակելի ծրագրի առաջնորդի կողմից՝ հովանավոր կազմակերպության հետ համագործակցությամբ: Ամենամսյա առաջընթացը կներկայացվի ՊՆ փոխնախարարին (Deputy Secretary) և գիտա-հետազոտական և ինժեներատեխնիկական գծով նախարարի տեղակալին (USW (R&E)): Դրան կնախորդի սկզբնական ցուցադրումը, որի կատարողը պետք է ներկայացնի սույն հուշագրի ստորագրման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության գլխավոր տնօրինությունը (CDAO) նաև կապահովի, որ այս նախագծերում ներգրավված բոլոր հիմնական միջոցները իրական ժամանակում հասանելի լինեն ամբողջ ՊՆ ծրագրերին, այնպես որ PSP արագացված իրականացումը թույլ կտա ամբողջ ՊՆ նախագծերին համաչափ արագանալ: Ուստի հանձնարարում եմ յուրաքանչյուր ռազմական դեպարտամենտին, մարտական հրամանատարությանը, պաշտպա-նական գերատեսչությանը և տեղում իրականացվող միջոցառումներին 30 օրվա ընթացքում որոշել առնվազն երեք առաջնահերթ ծրագիր, որոնք կմատնանշվեն այդ PSP-ներն արագ իրագործելու համար:

ՊՆ վեց կարևորագույն տեխնոլոգիական ոլորտներում (Critical Technology Areas)՝ ինքնավարության, C-C5ISRT-ի (հրամանատարություն, վերահսկում, համակարգիչներ, կապ, կիբերպաշտպանություն, հետախուզություն, հսկում և զորային հետախուզություն) և առաջադեմ արտադրության ոլորտներում ջանքեր պետք է շարունակեն բարձրացնել ՊՆ տեմպերը: Գաղտնի հավելվածներում շարադրված հատուկ նախաձեռնությունները, ներառյալ սույն հուշագրին առանձին գաղտնի հավելվածում ներկայացվածները, նույնպես պետք է արագացվեն: CDAO-ն հետևելու և դասակարգելու է ԱԲ ջանքերի այս ընդլայնված փաթեթը ըստ արագության և արդյունավետության, իսկ աշխատանքի ընթացքի մասին ամեն ամիս զեկուցվելու է գիտահետազոտական և ինժեներատեխնիկական գծով նախարարի տեղակալին:

---

[3] ԱՄՆ Քաղաքացիական պատերազմում (1861-1865 թթ.) իր վճռականությամբ և նպատակա-սլացությամբ հայտնի դարձած զորավար, այնուհետև ԱՄՆ նախագահ (1869-1877 թթ.) Հ. Ու. Գրանտ (Hiram Ulysses Grant):

ԱԲ հաշվարկներ: Որպես ԱԲ-ի և ինքնավարության զարգացման մեր ներդրումների մի մաս, ՊՆ-ը նույնպես զգալի ռեսուրսներ պետք է ներդնի ԱԲ հաշվարկների ենթակառուցվածքում մեր տվյալների կենտրոններից (datacenters) մինչև ծայրամասային սարքեր հասանելիության ընդլայնման համար: Մենք կկարողանանք ներդնել հարյուրավոր միլիարդ դոլարներ մասնավոր ձեռներեցության ԱԲ-ի ամերիկյան հատվածում՝ Ամերիկայի առաջատար համաշխարհային ընկերությունների հետ մեր աճող գործընկերության շնորհիվ: Մենք տեխնիկական ստանդարտներ սահմանելու ուղղությամբ կաշխատենք միջգերատեսչական գործընկերների հետ՝ նոր անվտանգ տվյալների կենտրոններ ստեղծելու համար: Եվ մենք կաջակցենք և կօգտագործենք ամերիկյան գիտության և անվտանգության հարթակը (American Science and Security Platform), որը մշակվել է նախագահ Թրամփի Genesis science and technology innovation Mission-ի շրջանակներում, որպեսզի մեր մարտիկներն ու ունակություններ մշակողները կարողանան լիարժեք օգտվել ամերիկյան ԱԲ հաշվարկների ռեսուրսներից և արդի նորարարություններից:

Տվյալների հասանելիություն: Ես հանձնարարել եմ CDAO-ին՝ պարտադրել, իսկ ՊՆ բոլոր բաղադրամասերին՝ կատարել «ՊՆ տվյալների հրամանագրերը»՝ էլ ավելի բացել մեր տվյալները ԱԲ-ը օգտագործելու և առաքելության առավելությունները ապահովելու համար: ՊՆ դեպարտամենտները և բաղադրիչների բոլոր ենթամասերը պետք է հետևեն դրանց՝ մեր տվյալներն: Ռազմական գերատեսչությունները և բաղադրիչները կստեղծեն, կպահպանեն և կթարմացնեն համակարգված դաշնային տվյալների գրացուցակները, բացելով դրանց համակարգի միջերեսները, տվյալների ռեսուրսները և մուտքի մեխանիզմները դասակարգման բոլոր մակարդակներում՝ համաձայն նախարարության 2021թ. Մայիսին ընդունված հուշագրի՝ «Տվյալների առավելությունների ստեղծում» (Creating Data Advantage): Նրանք CDAO - ին կտրամադրեն իրենց ընթացիկ կատալոգները՝ առկա բոլոր թարմացումներով, սույն հուշագրի ստորագրման օրվանից 30 օրվա ընթացքում: Հետախուզության և անվտանգության գծով ՊՆ տեղակալը կապահովի հետախուզական տվյալներին կառուցողական մոտեցումը, ստեղծելով միևնույն ժամանակահատվածում դրանց օգտագործման ուղիներ: CDAO-ն իրավասու է ՊՆ ցանկացած ստուգված տվյալներ ուղարկել օգտատերերին՝ հիմնավորված նպատակով և անվտանգության ուղեցույցների համաձայն: Այսօրվանից CDAO-ի տվյալների մերժումները պետք է հիմնավորվեն գիտահետազոտական և ինժեներատեխնիկական գծով նախարարի տեղակալին՝ յոթ (7) օրվա ընթացքում, որից հետո դրանք կչեղարկվեն կամ կբարձրանան փոխնախարարի մակարդակ: Մեր տվյալների առավելությունն անիմաստ է, եթե մեր մշակողները և օպերատորները չեն կարող օգտվել դրանցից:

Տաղանդ: Վերջապես, ես հավատում եմ, որ ամերիկյան լավագույն տաղանդները կտեսնեն ԱԲ-ի կարողությունների զարգացման և իրականացման այս արագացված կեցվածքը ՊՆ-ում, և ես ակնկալում եմ, որ յուրաքանչյուր զորատեսակ և բաղադրիչ կներգրավի և կպահպանի այդ տաղանդները: Այս նպատակով ես կուղղորդեմ ամբողջ ՊՆ-ում հատուկ լիազորություններ գործադրել՝ ներգրավման և վարձատրման

համար, ինչպես նաև անձնակազմի և կադրերի կառավարման վարչությունից (Office of Personnel and Management) և այլ գործընկերներից՝ նոր տաղանդների ներգրավման ծրագրեր, որոնք կարագացնեն ԱԲ ոլորտ տեխնիկապես տաղանդավոր անձանց հավաքագրումը՝ արհեստական բանականության պաշտոններում տեխնիկներ վարձելու գործընթացն արագացնելու համար: Եվ ես յուրաքանչյուր բաղադրիչին հանձնարարում եմ այս հուշագիրը հրապարակելուց հետո 60 օրվա ընթացքում տրամադրել ԱԲ ոլորտի տաղանդների հավաքագրման և զարգացման պլաններ՝ հաստատելու, մերժելու կամ փոփոխություններ կատարելու համար (30 օրվա ընթացքում):

Արագացման ակնկալիքներ

Սույն ռազմավարությունը կարագացնի առավելության ձեռքբերումը, և մենք պետք է այն իրականացնենք պատերազմի ոգով: ՊՆ-ը վերակողմնորոշելով պատերազմական պայմաններում գործելու համար, ես ակնկալում եմ, որ ռազմական ԱԲ գերակայությունը պահպանելու այս մրցավազքում մեր մոտեցումների կենսական տարրեր կդառնան.

Արագությունը հաղթում է: Մենք պետք է ընկալենք, որ տեսանելի ապագայում ռազմական ԱԲ-ը կդառնա մրցավազք և, հետևաբար, կհաղթի արագությունը: Մենք պետք է զենք դարձնենք արագության ուսուցումը, ինչպես նաև չափենք և կառավարենք ցիկլի ժամանակը և իրականացման տեմպերը որպես ԱԲ դարաշրջանում որոշիչ փոփոխականներ: Մենք պետք է ընդունենք, որ բավականաչափ արագ առաջխաղացման հետ կապված ռիսկերը գերազանցում են անկատար համաձայնության ռիսկերը: Ես CDAO -ին հանձնարարում եմ սահմանել տեղակայման արագության և գործառնական ցիկլի տևողության չափանիշներ բոլոր PSP-ների համար, որպեսզի նրանք ամսական զեկուցեն փոխնախարարին և գիտահետազոտական և ինժեներատեխնիկական գծով նախարարի տեղակալին:

ԱԲ մոդելների հավասարություն: Մենք տեսնում ենք ԱԲ-ի ավելի առաջադեմ մոդելների զարգացման աննախադեպ արագություն: Այս մոդելներն ամեն օր դառնում են ավելի խելացի և վստահելի: ՊՆ-ը չի կարող կիրառել արդեն մի քանի ամսական կամ տարեկան մոդելներ: Մենք պետք է օգտագործենք ԱԲ նորագույն և լավագույն մոդելները մեր մարտիկների համար: Բոլոր մակարդակներում այդ հնարավորությունների լոկ տեղակայումը պարզապես բավարար չէ՝ մենք պետք է կարողանանք պահպանել մոդելների արագ թարմացումը բոլոր մակարդակներում: Ես CDAO -ին հանձնարարում եմ համագործակցել ԱԲ արտադրողների հետ մատակարարման և ինտեգրման ռիթմը ապահովելու համար, ինչը թույլ կտա վերջին մոդելները ներբեռնել դրանց թողարկումից հետո 30 օրվա ընթացքում: Սա պետք է լինի ապագա մոդելների գնման հիմնական չափանիշը:

Պատերազմական ժամանակաշրջանի մոտեցում խոչնդոտներին: Մենք պետք է վերացնենք տվյալների փոխանակման, գործողության թույլտվությունների (ATO), փորձարկման-գնահատման-սերտիֆիկացման, պայմանագրերի կնքման, ծառայության ընդունման և տաղանդների կառավարման խոչընդոտները և այլ քաղաքա-

կանություններ, որոնք խոչընդոտում են արագ փորձարկումներին և նոր տեխնոլոգիաների ընդունմանը: Մենք պետք է ռիսկի փոխզիջումներին, «հավասարությանը» և այլ սուբյեկտիվ հարցերին մոտենանք պատերազմողի դիրքերից: Այդ նպատակով ես ակնկալում եմ, որ մեր CDAO-ն հանդես կգա որպես պատերազմական ժամանակաշրջանի CDAO և կաշխատի Տեղեկատվության գծով գլխավոր սպայի (Chief Information Officer, CIO) հետ՝ լիարժեք օգտագործելու օրենքով նախատեսված և պատվիրակված լիազորությունները՝ ԱԲ կարողությունների մատակարարումը արագացնելու համար, ներառյալ տվյալների միջդոմենային հասանելիությունը և գործողության թույլտվությունների արագ փոխանկում ՊՆ-ում աշխատանքի տեմպն արագացնող ղեկավարների կողմից: Գիտահետազոտական և ինժեներատեխնիկական գծով նախարարի տեղակալը կսահմանի կստեղծի «Խոչընդոտների վերացման խորհուրդ», որը լիազորված կլինի մերժել օրենքով չնախատեսված հայտերը և վերացնել անհապաղ լուծում պահանջող խնդիրների խոչնդոտները:

Մրցակցություն - կենտրոնացված պլանավորում: Ինչպես ցույց է տալիս ԱԲ ամերիկյան միջավայրը, թափանցիկ արդյունքների ցուցանիշներով փոքր թիմերի միջև դժվար մրցակցությունը առևտրային ԱԲ առաջնորդության շարժիչ ուժն է: Մենք պետք է այս մոդելը ներդնենք ՊՆ-ում և խրախուսենք դժվար մրցակցությունը՝ ռազմական ԱԲ-ի ինտեգրումն արագացնելու համար: Արագ, աշխույժ և անկանխատեսելի նորարարություններով բնութագրվող մրցավազքում կհաղթեն փոքր, պատասխանատու թիմերը: Մենք պետք է հաջողությունը չափենք դաշտային մշտական փորձերի միջոցով՝ տեղում անձնակազմին փոխանցելով ԱԲ հնարավորությունները, հետադարձ կապ հաստատելով օրերի, այլ ոչ տարիների ընթացքում, և ներդնելով թարմացումները ավելի արագ, քան հակառակորդը կհասցնի դրանց հարմարվել: Ես CDAO-ին հանձնարարում եմ մշակել ԱԲ համակարգի օգտագործման և առաքելության ազդեցության ցուցանիշներ՝ ԱԲ արագացման ջանքերի հաջողությունը գնահատելու համար: Որպեսզի շուկայի դինամիկան կարողանա խթանել ռեսուրսների մատակարարումը, ապա ռեսուրսների ապագա ապահովման կամ դրանց հետ կապված կարողություններից հրաժարվելու որոշումը պետք է պայմանավորված լինի նախևառաջ այդ ցուցանիշներով:

Մոդուլային բաց կառուցվածք. ԱԲ սպառազինությունների մրցավազքի պայմաններում համակարգի կառուցվածքը պետք է ապահովեն բաղադրիչների փոխարինումը առևտրային արագությամբ՝ համապատասխանությունը պահպանելու համար: Ես հրահանգում եմ ՊՆ ղեկավարներին և ԱԲ ունակությունների բաղադրիչ ծրագրերի ղեկավարներին, հզորացնել «Բաց համակարգերի մոդուլային կառուցվածքը» (Modular Open System Architectures, MOSA) և «ՊՆ տվյալների հրամանագրերը»՝ տրամադրելով մոդուլային միջերեսներ և հարակից փաստաթղթեր, որոնք բավարար կլինեն առանց գլխավոր կապալառուի աջակցության երրորդ կողմի ինտեգրման համար: ՊՆ-ում «պատասխանատու ԱԲ» հասկացությունը նշանակում է վերջ տալ ուտոպիական իդեալիզմին և անցնել սթափ իրատեսությանը: Բազմազանությունը, հավասարությունը, ներառականությունը և սոցիալական

գաղափարախոսությունը ՊՆ-ում տեղ չունեն, ուստի մենք չպետք է օգտագործենք ԱԲ մոդելներ, որոնք ներառում են գաղափարական «կարգավորում», որը խանգարում է նրանց օբյեկտիվորեն ճշմարիտ պատասխան տրամադրել օգտատերերի հարցումներին: ՊՆ-ը պարտավոր է օգտագործել այնպիսի մոդելներ, որոնք զերծ են քաղաքականացված սահմանափակումներից, և թույլ չեն տա սահմանափակել օրինական ռազմական կիրառումը: Այսպիսով, ես CDAO-ին հանձնարարում եմ 90 օրվա ընթացքում սահմանել մոդելի օբյեկտիվության չափանիշները որպես գնումների հիմնական չափանիշ, իսկ գնումների և ապահովման գծով Պն տեղակալին՝ ներառել «ցանկացած օրինական օգտագործում» ստանդարտ ձևակերպումը ՊՆ ցանկացած պայմանագրում, որի շրջանակներում 180 օրվա ընթացքում ձեռք են բերվում ԱԲ ծառայություններ: Ես նաև հանձնարարում եմ CDAO-ին ապահովել, որպեսզի ամբողջ ՊՆ-ում ԱԲ առկա քաղաքականության ղեկավարումը համապատասխանի այս հուշագրում նշված հրահանգներին:

Դառնալ «ԱԲ առաջնահերթ» ՊՆ

Ժամանակն է արագացնել ԱԲ-ի ինտեգրումը, և մենք կներդնենք ՊՆ ղեկավարության, ռեսուրսների և մասնավոր հատվածի գործընկերների ընդլայնվող շրջանակի ամբողջ ազդեցությունը՝ Ամերիկայի ռազմական ԱԲ գերակայությունը ամրապնդելու համար: «ԱԲ առաջնահերթ» մարտական ուժ դառնալը պահանջում է ավելին, քան պարզապես ԱԲ-ի ինտեգրում գոյություն ունեցող աշխատահոսքերին: Այն պահանջում է վերահիմաստավորել, թե ինչպես կկերտվեն առկա աշխատանքային հոսքերը, ընթացակարգերը, TTP-ները և գործառնական հայեցակարգերը, եթե դրանց ստեղծման պահին գոյություն ունենար ԱԲ-ի ժամանակակից տեխնոլոգիա, իսկ այնուհետև դրանք համապատասխան եղանակով վերաստեղծել: Մենք պետք է իրականացնենք այս վերափոխումը ՊՆ բոլոր ոլորտներում:

Վերը նշված ակնկալիքները պետք է դառնան տեխնոլոգիական «ԱԲ համապատասխանության չափանիշներ» մեր միացյալ զինուժի համար: 2026 թ. կդառնա այն տարին, երբ մենք վճռականորեն կբարձրացնենք ռազմական ԱԲ գերակայության նշաձողը:

Աղբյուր՝ https://media.defense.gov/2026/Jan/12/2003855671/-1/-1/0/ARTIFICIAL-INTELLIGENCE-STRATEGY-FOR-THE-DEPARTMENT-OF-WAR.PDF